ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Մասնագիտություն** դասվար

**Թեմա** Առաջին դասարանում կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունները և հաղթահարման ուղիները

**Կատարող** Սարգսյան Արմինե Գուրգենի

**Ղեկավար** մ.գ.թ., դոկտոր, պրոֆեսոր Գյուլամիրյան Ջուլիետա

Երևան 2022

# ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է

Ներածությունից

Երեք գլխից

Եզրակացություններից

Առաջարկություններց

Գրականության ցանկից

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է առաջին դասարանցիների կարդալու տարրական կարողության ձևավորման գործընթացում ունեցած դժվարություններով, դրանց հաղթահարմանը միտված աշխատանքների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:

# Մեր ուսումնասիրության նպատակը

Մշակել, փորձարկել և ներկայացնել կարդալու տարրական կարողության ձևավորման գործընթացում աշակերտների դժվարությունների հաղթահարմանը միտված մեթոդական ցուցումներ:

# Ուսումնասիրության խնդիրները

1. Ուսումնասիրել և վերլուծել թեզի հիմնախնդրին առնչվող մասնագիտական գրականություն:

2. Դիտարկել հիմնախնդրի դրվածքն առաջին դասարանում:

3. Բացահայտել կարդալու տարրական կարողության ձևավորման գործընթացում սովորողների դժվարություններն ու դրանց պատճառները:

4. Մշակել սովորողների կարդալու տարրական կարողության ձևավորման դժվարությունների հաղթահարմանը միտված մեթոդական ցուցումներ:

# Ուսումնասիրության մեթոդները

Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականության, պետական կրթական փաստաթղթերի և դասագրքերի ուսումնասիրության և վերլուծություն:

Դասալսումներ և արդյունքների վերլուծություն:

Փորձարարական դասերի մշակում վարում, արդյունքների վերլուծություն:

Հարցախույզ ուսուցիչների շրջանում, արդյունքների վիճակագրական վերլուծություն: Հարցազրույց ծնողներ հետ:

# Ուսումնասիրության նորույթը

Դիտարկել ենք գրաճանաչության հետայբբենական շրջանում սովորողների կարդալու տարրական կարողության ձևավորման գործընթացի առանցքային դժվարությունները, մշակել դրանց հաղթահարմանը միտված ցուցումներ:

# Մեր ուսումնասիրության

Տեսական նշանակությունը

Ուսումնասիրության ընթացքում բացահայտված օրինաչափությունները, կիրառված մեթոդների վերլուծությունը լրացնում են մայրենիի դասավանդման մեթոդիկայի բնագավառում առկա գիտելիքները

Գործնական նշանակությունը

Ուսումնասիրության արդյունքները կարող են պիտանի լինել ինչպես տարրական դասարանի ուսուցիչներին, այնպես թլ մանկավարժական բուհի ուսանողներին:

# Ուսումնասիրության բազան

Ուսումնասիրություններն իրա-
կանացրել ենք Երևանի Հ. Օշա-
կանի անվան հ. 172 անվ. դպրոցի առաջին
դասարաններում։

# ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ, ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Կարդալու  կարողության ձևավորման փուլերը:
- Ինքնուրույն ընթերցանությունը որպես առաջին դասարանցու կարդալու  կարողության դժվարությունների հաղթահարման միջոց:
- Ինքնուրույն ընթերցանությունը որպես կարդալու կարողության զարգացման գործոն. տեղն ու դերը մայրենի առարկայական ծրագրում և «Ինքնուրույն ընթերցանություն» ձեռնարկներում:


Կարդալու կարողության ձևավորման փուլերը
Առաջին փուլ
Երրորդ փուլ
Երկրորդ փուլ

# Ինքնուրույն ընթերցանության նպատակներն ու խնդիրները

1. Մշակել ու զարգացնել սովորողների կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հիմնական հատկանիշներով:

2. Հարստացնել երեխաների բառապաշարը, մշակել և զարգացնել նրանց լեզվական կարողությունները:

3. Աշխարհաճանաչողական տարրական տեղեկություններ ձեռք բերել շրջապատի բնական և հասարակական երևույթների, մարդկանց և նրանց աշխատանքային գործունեության մասին:

4. Իրականացնել աշակերտների բարոյական, գեղագիտական ու գաղափարական դաստիրակության ուղղությամբ դպրոցի առջև դրված խնդիրները:

# ԳԼՈՒԽ 2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԿԱՐԴԱԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՆԱՐ

- Կարդալու  կարողության զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների դրվածքն առաջին դասարանում՝ հետայբբենական շրջանում:

- Հեքիաթների ուսումասիրումը որպես առաջին դասարանցիների կարդալու կարողության ձևավորման և դժվարությունների հաղթահարման արդյունավետ միջոց:

- Կարդալու նկատմամբ առաջին դասարանցիների հետաքրքրության զարգացումը ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրման ճանապարհով:

- Լեզվական նախագիտելիքների ուսումնասիրումը որպես կարդալու կարողության ձևավորման արդյունավետությանը նպաստող միջոց:

## Առաջին դասարանցիների կարդալու դժվարությունները հետայբբենական շրջանում

1. Սովորողները չեն փորձում հասկանալ կարդացածը:

2. Դժվարանում են կարդալ բառակապակցություններով և նախադասություններով:

3. Չեն ըմբռնում կարդացածի գաղափարը:

4. Չեն պահպանում արտահայտիչ կարդալու կանոնները:

5. Չեն ըմբռնում դիպաշարի տրամաբանությունը:

6. Թույլ են տալիս անհարկի դադարներ:

Կարդալու դժվարությունները

1. Կարդում են տառերով,

երբեմն վանկերով:

2. Չեն հասկանում կարդացածի բովան-

Դակությունը:

3. Չեն կարողանում բառերը կապել իրար:

4. Վերջում մոռանում են սկզբի դեպքերը:

5. Կարդում են կմկմալով և ոչ արտահայտիչ:

6. Թույլ են տալիս ուղղախոսական սխալներ:

Դժվարությունների պատճառները

1. Չունեն համադրելու

կարողություն:

2. Կենտրոնանում են տառերը

ճանաչելու վրա:

3. Չեն ըմբռնում

Նախադասությունները:

4. Անուշադիր են կարդում:

5. Չեն հասկանում

Կարդացածը:

6. Չեն յուրացրել

ուղղախոսական

կանոնները:


Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններ
Հանելուկ
Շուտասելուկներ


Առած
Սուտասելուկներ
Ժողովրդական խաղիկներ

# Լեզվական նախագիտելիքների ուսումնասիրում քայլաշարը առաջին դասարանում



# Գլուխ 3. ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ

- Կարդալու կարողության ձևավորման և այդ գործընթացում ծագած դժվարությունների հաղթահարման ուղղությամբ իրականացվող աշխատանքները մայրենիի դասերին:

- Հետազոտության կազմակերպում և ընտրված մեթոդների նկարագրում:

Մայրենիի դասերի ընթացքում կիրառում ենք բարձրաձայն ընթերցանության տեսակը:



Կարդալու կարողության ձևավորմանը և դժվարությունների հաղթահարմանը առավելապես նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը:



## Նշենք կարդալու կարողության ձևավորման գործընթացում մեր և աշակերտների դժվարություններ

### Ուսուցչի դժվարությունները

- Կան երեխաներ, որոնք միանգամից չեն կարողանում հասկանալ նոր նյութը:
- Մեծաքանակ դասարանը:
- Չեն ապահովում աշակերտների ուշադրությունը:
- Չեն ապահովում ուսումնական նյութի նկատմամբ երեխաների հետաքրքրությունը:
- Դպրոցն ապահովված չէ ՏՏ միջոցներով:

### Աշակերտի դժվարությունները

- Հանձնարարվող նյութի բարդությունը:
- Ընթերցանության նյութերի հանդեպ հետաքրքրության բացակայությունը:
- Մտավոր գործունեություն ծավալելու կարողության անբավարար մակարդակ:
- Հնչյունային լսողության զարգացման դժվարությունները:
- Կենտրոնանալու անկարողությունը:

Կարդալու կարողության ձևավորմանն ու դժվարությունների հաղթահարմանը առավելապես նպաստում են գործունեության հետևյալ ձևերը



## Երեխաների կարդալու կարողության ձևավորման գործընթացում մեծ է ծնողների դերը



# Մեթոդական ցուցումներ

Առաջին դասարանում՝ կարդալու տարրական կարողության ձևավորման գործընթացում սովորողների ունեցած դժվարությունների հաղթահարման և թույլ տված սխալների կանխման աշխատանքային ծրագիրը մշակելիս պետք է բծախնդրորեն ուսումնասիրվեն նման աշակերտների մտավոր կարողությունները, առողջական վիճակը և բացահայտորեն ծագած խնդիրների պատճառները:

Կարդալու ընթացքում սովորողների թույլ տված սխալների և դժվարությունների հաղթահարման ուղղությամբ աշխատանքները պիտի առավելապես խրախուսել ինքնուրույն կարդալու գործընթացում և ատադասարանական միջոցով:

ԻՆքնուրույն ընթերցանության դասաժամերի և անհատական պարապունքների ընթացքում առավելապես պիտի ձևավորել սովորողների կապակցված խոսք կառուցելու, բառապարի հարստացման միտված աշխատանքները, այն աշակերտները, որոնք չունեն ազատ, անկաշկանդ կապացված խոսք և հարուստ բառապաշար, նրանքկարդալիս ունենում են տարաբնույթ դժվարություններ:

# Եզրակացություններ

1. Մասնագիտական գրականության մեջ հիմնականում դիտարկվում են կրտսեր դպրոցականների կարդալու կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկությունները, սակայն հատկապես հայալեզու գրականության մեջ գրեթե ներկայացված չեն սովորողների դժվարությունները կարդալու գործընթացում և նրանց հաղթահարման ուղիները:

2. Առաջին դասարանում, մասնավորապես գրաճանաչության փուլի ավարտից հետո՝ հետայբբենական շրջանում, ակնհայտ են դառնում այն հիմնական դժվարությունները, որոնք ունենում են աշակերտները: Ուստի անհրաժեշտ է այդ շրջանի համար մշակել աշխատանքային ծրագիրը՝ դրանք կանխելու կամ հաղթահարման համար:

3. Կարդալու գործընթացում աշակերտների թույլ տված սխալների, դժվարությունների հաղթահարմանը մեծապես նպաստում է ինքնուրույն ընթերցանությունը: Հետևաբար «Մայրենի 1» դասագրքի նյութերի ընթերցումից բացի պիտի բծախնդրորեն իրականացնել ինքնուրույն ծրագրով նախատեսված խնդիրները:

4. Առաջին դասարանցիների կարդալու կարողության ձևավորման գործընթացում պիտի ամեն ինչ անել, որ նրանք շատ կարդան: ԸՆդ որում՝ բազմիցս կարդան ոչ թե «Այբբենարանի» և «Մայրենի 1» դասագրքերում զետեղված ստեղծագործությունները, այլ անծանոթ՝ հետաքրքրաշարժ նյութեր, որոնք կբավարարեն սովորողների ճանաչողական հետաքրքրությունները:

5. Կարդալու գործընթացում սովորողների թույլ տված սխալների հաղթահարմանը կամ կանխմանը միտված աշխատանքների հիմքում պիտի ընկնի կարդալու որակական հատկանիշների ձևավորման ուղղությամբ աշխատանքը՝ նկատի ունենալով, որ մասնավորապես հասկանալով կարդալը մեծապես նպաստում է կարդալու ընթացքում սովորողների թույլ տված սխալների կանխմանը:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչների համար ստեղծված մեթոդական ձեռնարկներում և հոդվածներում կարևորել հատկապես կարդալու տարրական կարողության դժվարությունների հաղթահարմանը նպաստող մեթոդական ցուցումներ:

Տարրական դպրոցի մայրենիի ծրագրում արտադասարանական ընթերցանությանը հատկացնել ավելի շատ ժամաքանակ, քանի որ ուսուցման հետագա տարիներին կարդալու կարողությունը դառնում է նոր գիտելիքների ձեռքբերման միջոց:

# Գրականության ցանկ

1. Ջուլիետա Գյուլամիրյան - «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա»

2. Ա. Ե. Տեր-Գրիգորյան - «Հայոց լեզվի մեթոդիկա»

## Շնորհակալություն